

կարգով, ըստ հնարաւորութեան եւ ան-
թուականները:

1. 348 ա. Ածեղէն եւ լուսաւոր մա-
տենադրութիւն չորից աւետարանչաց հա-
մարարբառ եւ զուգապէս միաւորութեւ,
զոր նկարագրեցին վս. տնաւրէնութեան
բանին այ., ըստ քառանդով վտակացն
աղինա աղբերաբար գետահետեալ, ոտողե-
լով զանդաստանս մտաց հաւատացելոց ի
քս., որով հատարելորդ եւ բովանդակապէս,
որքան կամ եղեւ հոգւոյն սրբոյ զամենայն
խորհուրդ, զծածուկան եւ զյայտնիսն ար-
ձանացուցին, տալով եկեղեցւոյ աւանդ
ածատութիւն զբարձրագոյնսն եւ զխոնարհան
տընաւրինաբար խառնմամբ, զոր ընկալ-
եալ ի վերուստ յայտնութենէն զրեցին ա-
ռանձնապէս եւ զուգաբարբառ, որպէս զի
յանցնիւրսն ժամանակ անթերի եւ տնիւր
բաղմապատիկ եւ զանազան երախտեացն
այ. լիցի առ մեզ յիշատակ մինչ ի վախ-
ճան:

Որում ոյսպիսւոյ յոքնապատիկ բար-
եաց բաղձացող եղեալ իմ ամենանուաս-
տի եւ տրուպ սպասաւորի տան այ. Սա-
348 բ. հակ կրաւնաւորի(*) | եւ յետին քահա-
նայի, որ էի աշակերտ սբ. ուխտիս Հաղ-
բատայ ազգաւ եւ տոհմիւ ի մեծ մայրա-
քաղաքէն յԱնուոյ, սնեալ ի սրբաբան ուխ-
տիս ի Հաղբատ, ստացայ զսբ. աւետա-
րանս իմովք արդեամբք առ ի յիշատակ
ապագայից ինձ նուաստիս Սահակայ եւ
ծնողացն իմոց Ռովմանոսին եւ Կատային՝
եւ երկուց հարադատ եղբարցն իմոց Խպա-
տոսին եւ Առաքելին, եւ իւրեանցն զաւա-
կաց, եւ քերցն իմոց եւ զաւակացն նո-
ցուն, եւ ազգայնուոցն ամենից կենդանեաց
եւ մեռելոց: Եւ ետու գծագրել զսա եւ
կազմել ներքոյ եւ արտաքոյ յաւրինուա-
ծով ըստ իմում կարի, մեծաւ յուսով եւ
կատարեալ սիրով: Որ եւ աղերսական մաղ-
թանաւք հայցեմ ի սիրողացդ այ., որք
ժառանգորդք էք սրբոյ եկեղեցւոյ եւ սպա-
սաւորք տրուենան խորհրդոյն, յորժամ
առնուք զսա ի ձեռս ձեր, զիս զՍահակս

ստացող սորա, եւ զվերողրեալ ծնաւդոն
իմ եւ զեղբայրսն՝ եւ զՍարգիս հոգեւոր
ծնողն իմ: զՅակովբոսն եւ զՎարդն: Որ-
պէս զի ձերոյն սբ. աղաւթիւք արժա-
նասցուք հանդիպել ի զէպ ժամանակի
հանդերձելոցն բարեաց(*) | պատրաստե- 351 ա.
լոցն ի քս. սիրելեաց անուանն իւրոյ:

Եւ արդ զրեցաւ սա եւ ծաղկեալ կաղ-
մեցաւ յամի յորում էր թիւ համարոյն
թուականութեանս Հայոց հարիւրոց վեցից
եւ նոյնքանեաց տասանց: Իսկ նորոյ չըր-
ջանի միոյ հարիւրոյ քստն եւ ութեակ
թուով: Ի սբ. ուխտս Հաղբատայ գծագրե-
ցաւ ձեռամբ Յակովբայ յառաջնորդութեան
տն. Յոհաննիսի սրբասիրի, ի թագաւո-
րութեանն Հայոց արեւմտայինն կողման
Լեոնի քսոսէր թագաւորի, եւ ի սպարա-
պետութեան Զաքարիայ շահնշահի, յորոց
յաւուրս ժամանակաց յոլովս կատարեաց
ած. յաղթութիւն ի բազում տեղիս, զորմէ
այլք պատմեցնեն զայլ ինչ. եւ մեզ վասն զի
խնդիր է առ սրբութիւնդ ձեր մատուցա-
նել մաղթանս ողեհնձ պաղատանաւք, ո՛վ
լուսերամ բնակիչք սրբոյ ուխտիդ Ար-
ջուառճի, առ որ զյոյս հաւատոյ մեր
եղեալ զբովանդակ գոյք ծնողաց մերոց եւ
եղբարց ծախեցաք եւ շինեցաք զածախակ
սբ. եկեղեցիքս, եւ աւանդեցաք զսբ. ա-
ւետարանս յայ. սբ. եկեղեցիքս, որ շի-
նեցաւ ի մէջ ի վանս Առջուառճի: Որպէս
զի սբ. եկեղեցեալս եւ սբ. աւետարանաւս
մէք եւ ծնաւդքն մեր, եւ եղբարք եւ
ազգականք զտցուք | ողորմութիւն ի քէ. 351 բ.
այ. մերոյ ի մեծ եւ ի սոսկալի աւուրն
դատաստանի: Եւ որք յիշէք զմեզ բարե-
մտաբար, գաղթեք եւ զուք ողորմութիւն
յամենեցունց արարչէն, որ է աւրհնեալ
յաւիտեանս ամէն:

Հրամանաւ հաւր Մխիթարայ կազմե-
ցաւ ի վանքս Հոռոմոսի որոյ ողորմեսցի
քս. ած.:

Զկազմող սորին զԱբրահամ եւ զնկարիչ
սորին զՄարգարէն եւ զողորմութեան խըն-
դրող զՅով. յիշեսցիք յաղաւթս վս. տն.
աղաչեմք:

(*) Յիշատակարանի այս առաջին երեսը գը-
րուած է երկաթագրին մօտ արեւելեան բոլոր-
գրով, իսկ այնուհետեւ մինչեւ վերջը բոլորգրով,
բայց ոչ կրիիկեան:

(*) Յիշատակարանի մէջ, ներկայ կազմի ժա-
մանակ մտած է երկու թերթից բաղկացած մի
այլ յիշատակարան 349 ա — 350 բ, որ կը տես-
նենք քիչ յետոյ: